



տարի յեղափոխական աղետացիայի և դրոշման: Ոչ. նա հետևանք է այն դժոխական պայմանների, որոնցով շրջապատված է հայի կեանքը Թուրքիայում, հետևանք է նրա կրած բազմադարեան տանջանքների:

Ինչ վերաբերում է այն տղայական, անմիտ փաստարանության, թե հայերի հնդկա-եւրոպական ցեղին պատկանելը կասկածելի է, մինչդեռ քիւրդերի այդ ցեղին պատկանելը համարվում է ապացուցված փաստ, այդ միայն առաջ է դրվում, զերմանական յայտնի տեսակի լրագիրներին կոչող կողմնապահության զգացմունքից, որ ձգտում է նոյն իսկ գիտություն մեջ ապացուցված փաստը աղաւաղել:

Եւ այդպիսի անմիտ, անհիշեթի փաստարանություններով, քաղաքակրթված, կուլտուրական Գերմանիայի մամուլի մի քանի օրգանները սիրտ են անում հանդէս դուրս դալու և պաշտպանելու մի բարբարոս, մեղքորական ցեղի կատարած քստմենտի գործերը, պաշտպանելու այն ցեղը, որ ամենամեծ թշնամի է կուլտուրայի, որ բապառնում է բնաջինջ անել ամեն մի քաղաքակրթություն, աշխատելով ոչնչացնել մի ազգություն, որ կուլտուրական խաղաղ զարգացման միակ ներկայացուցիչ է թուրքաց պետություն մեջ:

Այդ բոլորի մէջ մի ուրախակի բան կայ միայն, այն, որ գերմանական մամուլը ընդհանրապէս վերջին օրերս սկսել է քաւել իր գանազան օրգանների յանցանքը, ամենախիստ յարձակողական դիրք բռնելով Թուրքիայի դէմ: A la bonne heure...

ՄԵՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Բ. Գրան պատասխանը, որով նա մերժեց եւրոպական պետությունների առաջարկած հայկական թէֆորմների ծրագիրը, մեծ զայրոյթ է պատճառել անգլիական մամուլին, որը զրեթէ միաբերան պարսաւում է սուլթանի արած այդ քայլը և մինչև անգամ պահանջում է զենքի ոյժով ընդունել տալ Թուրքիային եւրոպայի պահանջը: Ֆրանսիական և գերմանական լրագիրները թէեւ այդքան առաջ չեն դնում և մինչև անգամ վաղաժամ են համարում անգլիական մամուլի այդ սպառնական լինողը, բայց էլ չեն ծածկում իրանց դժգոհութիւնը և գտնում են, որ Բ. Գուռը մեծ ըրիսկ է անում, այդպէս ընդգիմադրելով եւրոպայի միահամուռ կամքին:

Այդ առիթով Ֆրանկֆուրտի «Gazette de Francfort» լրագիրը ասում է հետևեալը. «Թուրքիայի կառավարիչները անուղղելի են երբեք նրանք չեն մտքել որ և է թէֆորմ առանց արտաքին զօրեղ ճնշումի, մանաւանդ երբ պէտք է եղել քրիստոնեաներին աւելի իրաւունքներ տալ: Բայց սուլթանը և իր խորհրդականները չարաչար կը սխալվեն, եթէ կարծեն, թէ մերժելով Հայաստանի թէֆորմներին վերաբե-

համար, սրանց համբերությունը առածի կարողանցել է Տերսիմի չրջականերում թէ՛ «եօթը տարի ուր մարտնակ կը պահեմ» տերսիմցու նրման և այնպէս վրէժ կը լուծեմ»: Դարձեալ վրէժ-խնդիր մարդկանց համար ասում են. «Տերսիմցի ըրթիւ երակ ունի»:

Կարտաթի թէֆորմներին ու անուլթիւնը մի րօպէսով մտերիմ բարեկամութեան կը փոխուի, եթէ զեղապետների կամ տէգէների միջնորդութեամբ, մէկմէկի արեան ծարաւի թէֆորմներին միջև քիվայալութիւն հաստատուի:

Տաճիկ կառավարութիւնը երբեմն ներքին կաւաներից օգտվել կամենայով, զօրք ուղարկում է Տերսիմի դանազան մասերը նաւահուռ, շատ բանախներ են քնացել, բայց քիւրդեր են աղաւաղել ու վերադարձել, ոմանք ընկել են տերսիմցուց չեչխանէ հրադանների առջև, ոմանք էլ նախանձեղով քրդերի վիճակին՝ այնտեղ մնացել ու ձուլվել են նրանց հետ:

Սուլթանը թէեւ շատ բան չէ սրահանջում այս լեռնախմբներից, բայց զարձեալ սրանք մերժում են նրա պահանջը և չեն ուղարկ համաձայնել: Ստամբուլի վիսպետի կամեցածն աննշան բան է, սուրբ չէ ուղարկ, այլ անուանական հնազանդութիւն, և իբր ձևականութիւն՝ զոնէ պատեւադմի ժամանակ մի քանի զօրք: Սրանով չաժուտ է սուլթանը զայլաթիւն (աշխարհակալութեան)

ընալ բոլոր առաջարկութիւնները, կարող են յոյս ունենալ այն պետութիւնների պաշտպանութեան և համակրութեան վրա, որոնք չեն մասնակցել Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի զիպլումատիական զործողութեան:

Իսկ Պարիզի «Temps» լրագիրը ահա ինչ է ասում. «Բոլորովին ճիշդ է, որ Բ. Գրան առած պատասխանը մեծ պետութիւնների մայիսի 11-ի յիշատակագրին, միանգամայն անբաւարար է: Կարծում են, որ այդ պատասխանը տրվել է միայն ժամանակ փաստակալու համար: Երբ պետութիւնները պէտք է ներկայացնեն այժմ մի աւելի ազգու հոտա, որը, հաւանօրէն, պէտք է չեչափի մի ծօվային ցօյց»:

«Le Jour» լրագիրը գտնում է, որ սուլթանի այդ մերժումով հայոց հարցը խիստ ծանր կերպարանք է ստանում: Այդ մերժումը, ասում է լրագիրը, մի որոշ յուզմունք է առաջ բերել Լօնդոնի քաղաքական շրջաններում և այժմ հայոց է առաջ դրվում, թէ արդեօք երբ պետութիւնները ստիպված չեն լինի զիմել զենքի ոյժին՝ իրանց վիճիւնները յարդել տալու համար: Եւ արդէն խօսվում է մի ծովային ցօյցի մասին...

«Нов. Время» լրագիրը, մի առաջնորդողի մէջ խօսելով Բ. Գրան մերժողական պատասխանի մասին՝ Հայաստանում թէֆորմներ մտցնելու առիթով, ասում է.

«Պատասխանել Հայաստանի համար թէֆորմների պահանջին, որ պարտաւորական է Թուրքիայի համար Բերլինի դաշնագրի հիման վրա՝ նրանով, թէ «անհրաժեշտ համարված թէֆորմները պէտք է տարածվեն կայսրութեան ամբողջ ազգաբնակչության վրա, և ոչ թէ միմիայն հայերի վրա», իրաւունք չունի մի կառավարութիւն, որը շատ տարիներ առաջ համաձայնեց մասնաւոր թէֆորմներ մտցնել Լիբանանում և Կրիսէ կղզու վրա, իսկ աւելի ուշ՝ միջազգային դաշնագրով պարտաւորվեց մի այդպիսի բացառութիւն ընդունել և Հայաստանի համար:

«Խօսել ընդհանուր թէֆորմների» մասին մի երկրում, ուր դեռ de jure չէ վերացված Միջհամ-փաշայի ամենից մանացված հաշակաւոր սահմանադրութիւնը, ճիծաղելի է և բացի զրանից յանդգնութիւն է այն պետութիւնների վերաբերմամբ, որոնք անհրաժեշտ են դատում զիպլումատիական միջամտութիւն հայերի համար:

«Այդ բոլորը պէտք է աչքի առաջ ունենան սուլթանի խորհրդատուները վերջնական պատասխան տալու ժամանակ և յիշեն, որ իրանց սկսած զործից պետութիւնները յետ չեն կանգնի և միջոցներ կը գտնեն իրանց նպատակներին հասնելու»:

տիտղոսը, և պատմութեան մէջ ինքը անմահանող մի էջ:

Շահ-Հիւսէյնի հայրը, որ Տերսիմի մի բաժնի փողովքանի բացարձակ տէրն էր, եօթը տարի շարունակ զիւրապանական պատերազմ մղեց օսմանցու դէմ, իրան դաւանակից քրդեր օգնութեան կանչեց, իւրաքանչիւրին 30-ական զուրուս ամասական վճարեց այնպիսի մի ժամանակ, որ 30 զուրուսը համապատասխանում էր մեր օրվայ 150 զուրուսին, մինչդեռ այսօր տաճիկը իր զօրքին ամասական 20 զուրուս է վճարում և 12 ամասականից հաղիւ երկուսը:

Այսինքն ծերունի բէկը վճուել էր զոհել բոլոր հպատակները, ամբողջ գանձը, մինչ իսկ իր անձը, իրան աւանդ արված անխախտութիւնը պաշտպանելու համար, բայց իր տղան Շահ-Հիւսէյնի, աւելի խորացրեց և հեռաւոր, պատերազմի ժամանակ, հօրից դադարի, դիտեց ներկայացուցիչը հրամանատար փաշային, ասելով՝ «Հայրս ծերացել և ցնդել է, նա չէ խմանում ինչ է դրծում, ևս կարող եմ համաձայնութիւն գրացնել ձեզ հետ և վերջ դնել այս կռիւներին, տուէք միայն ձեզ դալմադրութեան ատիճան և իմ երկիրը կառավարելու իրաւունք, ես կը տամ ձեզ տուրք և մի որդեալ թիւով զինուոր»:

Հարաձուռեալ փաշան համաձայնեց: Շահ-Հիւսէյնի վերադարձաւ իր հօր օտ, բայց ծերունին

ՕՐԿԱՅ ՀԱՐՅԸ  
IX

«Հայոց ինքնավարութեան» լուրը, ինչպէս երևում է, սարսափ է գցել Հայաստանի մասնատակամ ազգաբնակչության վրա...

Մի կողմից այն երկիրը, որ դրում է ամեն մի մասնատակամ, երբ լուր է քրիստոնեայ պետութիւնների «Մօսկովայի թագաւորի», «Բնդվիլի», «Փրանդի» անունները, իսկ միւս կողմից թիւարք կառավարութեան ձգտումը՝ անպատճառ համոզելու մասնատակամներին, որ դեռ ավուր հայերը սարսափելի դիտաւորութիւններ ունեն, — այնքան են վախեցրել արիւնարբու քիւրդին, — քանքան ևս վախեցրել արիւնարբու քիւրդին, և ֆանատիկ թիւրքին, որ նրանք արդէն մտածում են, թէ ուր փախչեն և որտեղ ապաստան գտնեն, երբ հայերը ինքնավարութիւն ձեռք կը բերեն, կամ ինչպէս նրանք են ասում, «թագաւորութիւն կը ստանան»:

—Ասացե՛ք, ինդրեմ, հարցրի մի օր Մուշից եկած մի պարսիկ, քիւրդերը ինչ կարծիք ունեն հայոց հարցի մասին և ինչպէս են վերաբերվում զէպի մօտիկ աղաքան:

—Քիւրդերը, պատասխանեց եկուրը, իսկապէս ներքին տետրութիւն չեն դրում զէպի հայոց հարցը, և շատ էլ չեն վախեցում իրանց մօտիկ աղաքանց: «Մեր հայրը նա է, ով մեր մօրը կուզի», — մեր մօրը կուզի, ասում են քիւրդերը: Եւ այդ բնորոշ, քրդական խօսքերի մէջ արտայայտվում է նրանց ամբողջ աշխարհայեցողութիւնը:

«Մեր հայրը նա է, ով մեր մօրը կուզի», — այդ խօսքերով քիւրդն ասում է. մեր երկիրը մեր մայրն է: Այսօր այդ մայրը, այսինքն երկիրը, թիւրքի ձեռքումն է, նրան էլ մենք մեղ հայր ենք ճանաչում: Վաղը այդ մայրը, այսինքն երկիրը, ուրիշի ձեռքը՝ հայերի ձեռքը կընկնի, մենք էլ նրան մեղ հայր կը ճանաչենք: Ուրիշ խօսքով՝ «մեր հայրը նա է, ով մեր մօրը կուզի»:

Ահա այդ տեսակետի վրա հիմնվելով, ինչպէս երևում է բոլոր տեղեկութիւններից, քիւրդ տարրը, չը նայած իր արիւնարբու հակումներին՝ ներքին թշնամութիւն զէպի հայոց հարցը չէ դրում, և շատ էլ չէ յուսահատվում:

Եւ եթէ այս բոլորն քիւրդերը Հայաստանում մի փոքր յուզված են, դրա սրտածառը թիւրքաց կառավարութիւնն է, որ ամեն ջանք դրած է դրնում հակադրելու թէ՛ մասնատակամ քիւրդին, որ հայոց հարցը ըստպատում է կործանել, ոչնչացնել իսլամի կրօնը, և քեզ թէ թիւրքին և թէ քիւրդին այն երկրից, ուր նրանք օրդոց օրդի աղուում են...

Եւ այդ ֆանատիկուս, զրդուղ, նենգախիտ պրօպագանդան, մուլաների և կառավարչական պաշտօնեաների ձեռքով արքան տարածվել է մասնատակամ ժողովրդի մէջ, որ արդէն թիւրքերը մի քանի տեղերում պարտաւորվում են դադարեցնել ինքն ինքի մասնատակամութեան սրբալայրերը, զէպի Մեքքա և Մեդինէ, երբ դեռ ավուր են երբ կը դառնան երկրի տէրը, երբ կիսաւորանի տեղ

մերժեց տեսնել նրան, վրնդեց սրբուռն, անիծեց նրան և մի քանի օրից յետոյ վաղից կաթուածահար եղաւ ու մեռաւ:

Իշխանութիւնը երբ Շահ-Հիւսէյն բէկի ձեռքն անցաւ, զարաբեցրեց զարձեալ հարկ ու զինուոր տալը, բայց ոչ իսկոյն, կամաց-կամաց, երբեմն տալով, երբեմն չը տալով, չը խրանցնելու համար կառավարութիւնը:

Տերսիմի վրա օսմանցու տարած ամենամեծ յաղթանակը խողատում հաստատած մութնատարիֆութիւնն է, որի անունը կայ, բայց ինքը չը կայ, կառավարութիւնը կարծում էր, որ խողատում մութնատարիֆ հոտելով՝ կամաց-կամաց կը կարողանայ ազդեցութիւն ձեռք բերել և տիրաւոր անկախ Տերսիմին, բայց հաշիւները սխալ դուրս եկան: Տերսիմեան պաշտօնեայի գործունէութիւնը զմարդից հեռու չէր գնար և իր գութնութիւնը զոնէ ապահովելու համար, կամայական մայ ստիպում էր յաճախ համաձայնել քիւրդ աւաղակներին հետ: Տերսիմիցը այնպիսի դրութեան մէջ գցեցին նրան, որ ստիպվեց հաշտարար միջնորդի դեր կատարել զօրդոյնների և զօրդաց-վոյնների միջև, ընդունելով իր աշխատութեան վարձ մի փոքրիկ խաւ վէ՛-փաւ աւախ: Կտաւաւարիֆութեան համար, առանց փոխարէնը կօպել ստանալու, սեղմեց մութնատարիֆ իրա

Հայաստանի դաշտերի վրա կը ծածանի քրիստոնեական դրօշակը...

Բայց ի դուրս: Մասնատակամ աշխարհը դուր է վրդովում և անտեղի է այդ բոլոր իրարանցումը, յուզմունքը, կատաղութիւնը և յուսահատութիւնը:

Ահա մեր առաջն է այն հուշակաւոր յրադէրը, որ պետութիւնները ներկայացրին թիւրքաց կառավարութեանը, և որը նա մերժում է ընդունել: Այդ յրադէրը ոչ մի իրաւունք, ոչ մի արտօնութիւն չէ տալիս դեռ ավուրի ձեռքը, և մալի չափ չէ թուլացնում մասնատակամից ոյժը և իշխանութիւնը:

Կա մի շատ թուլ փորձ է հաստատելու երկրի մէջ արդարութիւն ան ամենատարաբան ըսկզբունքները, և եթէ այդ սկզբունքները իրագործվեն, երկրում ենք բոլոր մասնատակամների տրեւով թիւրքերը և քիւրդերը ոչ թէ միայն չեն փախչի զէպի Մեքքա և Մեդինէ, այլ աւելի երջանիկ և աւելի հանդիստ կը դրան իրանց այն երկրի մէջ, ուր մինչև այժմ այդ երջանկութիւնը և հանգստութիւնը վնասուած են միմիայն մի բանի մէջ... —քրիստոնէի աւաւաւաւաւ մէջ...

Խ. Մարտիկան

ՀԱՅՈՅ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՐԺՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I  
Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանտօյի արտասանած ճառի առիթով՝ Լօնդոնի «Times» լրագիրն հետևեալն է ասում.

«Այն յայտարարութիւնները, որ Հանտօ արտաւոր ճառի մէջ, շատ խորիմաստ են: Մեծ պետութիւնների համբաւալս զործողութիւնը Հայաստանում պէտք է համադէ Թուրքիային, թէ այդ հարցի վերաբերմամբ որ և է տարաձայնութիւն չը կայ պետութիւնների մէջ»:

II  
Լօնդոնի «Berliner Tageblatt» լրագիրն հետևողական է. «Միմիայն թիւրքերի խորհուրդի մէջ, լուր Բոյդէրի նախագահութեամբ, վճռվեց արտակարգ միջոցներին չը դիմել Թուրքիայի դէմ: Հայոց հարցը կենթարկելի նոր վերաքննութեան: Եթէ դրանից յետոյ ևս ցանկալի հետևանք չէ ստացվի, այն ժամանակ կը դիմեն մեկ մեծ պետութեան միջնորդ դատարանին»:

Մենք հիմք ունենք չը հաստատու Բերլինի լրագրի այդ խօսքերին:

III  
Լօնդոնի «Daily Telegraph» լրագրի Կ. Պօլի թղթակիցը Բ. Գրան մերժումի մասին ասում է հետևեալը.

«Բ. Գրան պատասխանը դարմանք է պատճառել քաղաքական շրջաններում և ընդհանուր կարծիք է, որ օսմանեան կառավարութիւնը չէր համարձակվի այդպիսի մի պատասխան տալ, եթէ անուղղակի կերպով խրախուսված չը լինէր մի քանի եւրոպական պետութիւններից: Ինչ վերաբերում է Անգլիային, Ֆրանսիային և Ռուսաստանին, հաստատված է, որ յամենայն դէպս

ւանդները և վերանցեց դաշնադաւութեան, շատ չէ անցնում, այն էլ կը փոքրացնէ, կը վերածէ միւլթրութեան, իսկ սա էլ մի օր ոչնչութեան, որով խողատ կընկնի իր նախկին վիճակի մէջ:

Ահա ու սարսափը տիրում է Տերսիմի չրջապագում, երբ ձեռները սկսում են հալվել. ճանապարհները երբ կը բացվեն, տէրսիմիցը դուրս են թափվում իրանց անեղիք և մէկ էլ վերադառնում են, երբ ձեռք գալիս է:

Այլով ամսից մինչև հոկտեմբերի վերջերը կենանք և ինչքի ապահովութիւն չը կայ: Տերսիմիցը բռնում են կապանքների (կիրճ) բերանները և սպասում են իւր սմէթի (կողովուրտ):

Ճանքաբանները ստիպված են միշտ կապանքներից անցնել, որովհետեւ երկիրը լեռնային և ժայռոտ լինելով՝ ճանապարհները անցնում են կապանքների միջից:

Տերսիմիցը աւարաւորութեան ժամանակ, բայց թէլուրից ոչ քիչ չեն յարգում, կողոպտում են հաւասարապէս հայն ու քիւրդը, տաճիկն ու եւրօպացին, կառավարութեան պաշտօնեան և կառավարչական սուրհանդակը: Առանց կուռ եղած զորութիւնը սոսկ աւաղակութիւն է նկատվում, մինչդեռ զինու. զօրութեամբ եղածը՝ դիւցազնական աւաւ:

Մալի-Գօնի



ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳՈՒՅԻՑ

Կ. Պոլիս, մայիսի 31-ին

Ներկ, մայիսի 30-ին, տեղի ունեցաւ խառն ժողովն արտասովոր նիստը, որ յատկապէս գումարուած էր Սիւնի հաղորդուած կաթողիկոսական ընտրելիներու ցանկին վրայ իր արագորոշութիւնները ընելու համար: Նստին կը նախագահէր Պատրիարքը:

Ժողովը խորհրդակցութենէ ետքը զազանի քուէարկութեան ձեւնարկելով վեց ընտրելիներուն մէջէն հետեւեալ երեքը նշանակեց:

- Գրիգորիս եպիսկ. Ալեքանդրեան 16 քուէ
- Գրիգորիս եպիսկ. Յովհաննիսեան 14 »
- Կիրակոս եպիսկ. Բեքմէզեան 14 »
- Կիրիլիոս կաթողիկոսութեան իւր ընտրելի Մէլքիսեդէկ եպիսկ. Մուրադեան մէկ քուէ ստացաւ խառն ժողովին, Հմայեակ եպիսկոպոս Դիմաքեան երկու քուէ:

Քուէարկութեան այս արդիւնքը անմիջապէս հետագրով հաղորդուեցաւ Սիւնի կաթողիկոսական ընտրութեան գործադիր տեսուչ Գրիգորիս եպիսկ. Յովհաննիսեանին:

Սիւնի մէջ վերջնական քուէարկութիւնն և ընտրութիւնը տեղի պիտի ունենայ յունիս 4-ին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

Կարգադէր «Մշակի» երանի թղթակցութիւնը (№ 63), որը ուստայ լրագրիւններն էլ արտասովոր են, — և ալ չեցի:

Ինչ օրի ենք հասել, — մտածեցի ես, — որ մի քանի օր, որքանով ամենատարբեր եղանակներով, իրան թող է տալիս սպանապէս կարգադիր ամբողջ թիւին կառավարին: Անանիա եպիսկոպոսին և զարոյցի ամբողջ հոգաբարձուութեան, և այլ բաւական չէ, կըրո՞ւմ է զարոյցի գործերը, կարծէք թէ իր սեփական ժամագիրքը և մաշտոցը լինի:

Ո՞վ է այդ քանանան, ինչ է դրա անունը, — չը գիտեմ, բայց համարձակ կարող եմ ասել, որ միայն Կիրիլ եպիսկոպոսին չկուրցի կարող է դուրս գալ մի այդպիսի մարդ, մի այնպիսի տարախֆ, որը յանուն եկեղեցու և յանուն կարգապահութեան, վերաբարձու է նախ մի եպիսկոպոսին, ապա մի թեմական կառավարչին, և վերջապէս մի ամբողջ հոգաբարձութեան նախադասին, և այլ բոլորը, կրկնում ենք, յանուն կարգապահութեան, յանուն եկեղեցու և զարոյցի...

Իսկո՞ք հայոց եկեղեցի, իսկո՞ք հայոց զարոյց...

Չարմանալի մարդ է այդ Անանիա եպիսկոպոսը, — չունի ոչ հեռատեսութիւն և ոչ էլ հոտառութիւն, ինչ հարկ կար ընել ինչ հաշիւները, հակադրութիւն նշանակել եկեղեցական փողերի վրայ, կամ արգելել կամայականութիւնները: Թող պէտք էր տալ, որ անեն, ինչ կամենում են, տանեն, ինչ ուզում են:

Եւ այն ժամանակ, հաւատացնում ենք, ոչ մի քանանայ այդքան չէր ընդունանայ և ոչ մի ձեռք անկիւններից չէր խրախուսէ այդ ընդունութիւնը...

Սեր խորհուրդը Անանիա եպիսկոպոսին այն է, — եղէք այնպէս, ինչպէս բոլորն են, և այն ժամանակ ձեզ մինչև երկինք կը բարձրացնեն...

Նայն խորհուրդը կը տանք և խորհն եպիսկոպոս Ստեփաննին, որն այժմ այնքան եռանդով սկսել է մաքրել Ստորախանի թեմը, պարզել մոռնալ հաշիւները, ամենէն տղէ տիրացուներին, և ճանապարհ տալ փողովրդի ձայնին...

Ինչ հարկաւոր է այդ բոլորը, ուզում էք հանդիստ լինել, թեմ ստանալ, հարստանալ, — մի հատ վարդապետ քաջացէք ամեն բանի վրայ, մի չինական պատ կանգնեցրէք ձեր և փողովրդի մէջ, — և այն ժամանակ հանգիստ կապրէք և հանդիստ կը մեռնէք:

Հմարիտ է, այն ժամանակ պատմութիւնը, անտղը պատմութիւնը ձեզ դրօ կը նշանակէ, բայց ինչ պատմութիւն, ինչ ապագայ... բան չունէք:

Սկսեցի հոգեորականներով կը վերջացնեմ մի խորհուրդ տալով բոլոր հոգեորականներին. — եթէ ուզում էք, արագան հայրեր, արժանապատիւ հայր սուրբեր և տէր-հայրեր, հանգիստ լինել, պաշտօններ ստանալ, ձեր ուղածն անել, — այն ժամանակ անէ՞ք կարգապէս «Մշակի» դուրսին, փակեք «Մշակի» կուսակցութիւնից, գոնէ առ երես քարոզեցէք, որ «Մշակ» փնտաւար է, եկեղեցին քանդող է:

Հմարիտ է, այդպէս անելուց յետոյ դուք կը ստանաք մեծ վերաւորանք, այն է գովասանք «Արարողութեան» և թիֆլիսի վարձկան թերթերի էջերում: Բայց, ինչ արած, այդ փողերի զոհարե-

րութիւնը հարկաւոր է, որպէս զի ձեր ուղածն անէք, ձեր ցանկութիւնները կատարեք...

Լսէք իմ խորհրդին, յարգելի հովիւներ, և զէ՛ք մի քանի տարի չէք փոշմանի...

ԳՐՈՂ.

“ՄՇԱԿԻ” ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՈՒՈՒՍԱՅ ԳՐՈՒԹԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԳՈՐԳ, 6 յունիսի: Ներկ, յունիսի 5-ին, վարչակալի երկաթուղու Ալեքսանդրովսկայա կայարանում, Ն. Ս. Բոնդարի մարմինը կիւժ ուղարկելու ժամանակ ներկայ էին և երկաթաղէցին նշխարքին՝ Թագաւոր կայսրը և պետական խորհրդի նախագահ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւիչ:

ՊԱՐԻՉ, 5 յունիսի: Բարձր Մորենիճ յայտնեց Հանուստին, որ մի յատուկ սուրհանդակ է եկել Պարիզ, որը Պետերբուրգի բերել է ու Անդրէյ Նախալոյի չքանանը հանրապետութեան նախագահին: Շքանանը յանձնեց նախագահին Բարձր Մորենիճին, զեպարանութեան բոլոր պաշտօնականներին հետ միասին, յունիսի 3-ին (15), Երևանն սպասուած:

Կ. ՊՈԼԻՍ, 5 (17) յունիսի: Լուր է պտտում, որ ուստայ, անդրկական և ֆրանսիական զեպարանները յայտարարեցին, որ բանակցութիւններ չարժանակել թիւրքաց պատառիւնի հիման վրայ անհնարին է: Բրիտանական նաւատորմը զինաց Կիպրոս: Այն կարծիքն է տիրում, որ եթէ Ռուսաստանը և Ֆրանսիան չեն մասնակցի Մեծ-Բրիտանիայի գործողութիւններին, յամենայն դէպս, արգելքներ չեն յարուցանի:

ՊԱՐԻՉ, 5 (17) յունիսի: Չը նայելով չովինատական թերթերի հրաւերին, որ ուղղւած էր բուլան-ժիտներին, հայրենասէրների լիզային, էլզապի-ներին և առհասարակ նրանց բարբին, որոնք մասնակցել են 1870 թ-ի պատերազմին, Կիլի սոմալիսթիւնները զէմ զոյցներ Համաձայնութեան հրապարակի վրայ անցան առանց լուրջ պատահարների: Երբ անդիմաբնից 60 հոգի մտան Ստորախանի քաղաքի արձանին և երեք գոյ-նի պաակ դրին վրան: Տիւրքերն այգու առաջը և Համաձայնութեան հրապարակի տրոսուարների վրայ հաւաքվեցին մի քանի հազար հոգի, բայց «կեցցէ Ֆրանսիա, կեցցէ Լիզա-Ղոտարինդիա» բացականչութիւնները թող արձագանք դառն:

ԱՆՏԷՑՆԻՐՈՒՄ, 5 (17) յունիսի: Այսօր, ցերեկուայ 12 1/2 ժամին, ստուայ նաւատորմը, բաղկացած «Ալեքսանդր II կայսր» զրահակրից և «Իւրլի» զրահակրի կրէսերից, և ֆրանսիական նաւատորմը, բաղկացած «Heche» զրահակրի նաւից և «Duple-de l'ome» մարտանաւից, եկան Կիլի նաւահանգիստը: Երբ նաւատորմը մտեցան դերմանական նաւերին, նաւերը ողջունեցին միմեանց «ուրալի» աղաղակներով և թնդանութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԳՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 6-ին

|                                         |     |         |   |
|-----------------------------------------|-----|---------|---|
| Հոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .         | 92  | ր. 90   | կ |
| Բերլինի վրա 100 մարկ . . .              | 45  | » 325/8 |   |
| Պարիզի վրա 100 ֆրանկ . . .              | 36  | » 80    |   |
| Ռակի . . .                              | —   | » —     |   |
| Մադրասի կուպոններ . . .                 | 148 | » —     |   |
| Արձաթ . . .                             | —   | » —     |   |
| Բորսայի դիսկոնտ . . .                   | 5   | » 70/0  |   |
| Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .       | —   | » —     |   |
| — — — 2-րդ . . .                        | —   | » —     |   |
| — — — 3-րդ . . .                        | —   | » —     |   |
| 40% պետական բէնտա . . .                 | 99  | » 50    |   |
| 50% ոսկեայ բէնտա 1894 թ. . .            | 164 | » 50    |   |
| Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .       | —   | » —     |   |
| — — — 2-րդ . . .                        | —   | » —     |   |
| — — — 3-րդ . . .                        | —   | » —     |   |
| — — — 4-րդ . . .                        | —   | » —     |   |
| Էկրքին 50% առաջին փոխառութ. . .         | 235 | » —     |   |
| — — — երկրորդ . . .                     | 223 | » —     |   |
| 50% պետական երկաթուղ. բէնտա . . .       | 101 | » 50    |   |
| 40% ներքին փոխառութեան . . .            | 99  | » —     |   |
| 4 1/2% զրառ. թղթ. ագն. կալ. բանկի . . . | 101 | » —     |   |
| Ագն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .      | —   | » —     |   |
| Գրառ. թղթ. . .                          | 205 | » —     |   |
| 4 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի . . .   | 101 | » —     |   |
| 4 1/2% գրառական թղթեր կալուած. . .      | —   | » —     |   |
| Փոխ. կրեդիտ. բնկեր. մետալ. . .          | 150 | » 75    |   |
| — — — թղթադ. . .                        | —   | » —     |   |

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. բնկերութեան օրիգայինները. . . 101 » 25 »  
Մոսկվայի քաղաք. օրիգայիններ. . . 100 » 75 »  
Օդեսայի . . . 100 » — »  
Թիֆլիսի . . . 99 3/8 » — »  
Գրառ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . . 101 » — »  
— — — Բուխարայի . . . 101 » — »

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՆԿՆԻ ԲԱԼԱՆԹԱՐ  
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

“ԳԱՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ”

Վէպ Թիֆլիսի կեանքից  
Հեղինակութիւն Լ.ՈՒՄԱՅԻ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել այս հասցեով՝ Тифлисъ, Типо-графия Главногоначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիսում վաճառվում է նաև Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի կովկասեան գրալաճառանոցներում: (№ 64) 2—5

Լ. ԹԻՖԼԻՍԷԼԻ ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՅՈՒՄ  
Ծախվում է Աբխազում Յովհաննիսեանցի

ՈՒՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅՆԵՐԷՆ ԲԱՌԳԻՐԴԸ

Առաջին հատորի գինն է 3 ր.:  
Երկրորդ հատորի գինն է 4 րուբլի:

(№ 65)

1—3

Լոյս տեսաւ.

Ի ՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎԻ

“ՍՐԶԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ”

(Стихотворения въ прозѣ)

Աշխատութիւնը

Թարգմանեց՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆ

Գինն է 50 կ. ճանապարհաճախով 60 կ.:

Ցանկացողները պէտք է դիմեն ԹԻՖԼԻՍ, կենտրոնական գրադաճառանոցին կամ Թարգմանչին՝ МОСКВА, Новая Басманная, д. Шибаевой, контора М. Л. Шоршорова, Александру Цатурянъ. (№ 65) 1—8

ՆԿԱՐՈՒՄ ԵՄ

Առաջին վրա ՎԵՀԱՓԱՌ. ԿԱՌՈՂԻԿՈՍԻ, ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ԲԱՅՅԻԻ պատկերները և զանազան տեսարաններ՝ բազմոցի բարձի երեսի համար՝ 3—5, լուսամտի ու մետաքսեայ կտորների վրա նկարված 6 հայ գործիչների պատկերներով 3. մետաքսեայ թաշկինակներ յայտնի հայ գործիչներով, ժապաւններ վերայիշեալ պատկերներով: 20 25, 30 կոպէկ: Ցանկացողները կարող են ստանալ ինձանից: Հասցէն. Малая Ванкская у. д. Мурадова № 7. А. Родионова. (№ 65) 1—6

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆԱԽՈՆ

Ա. ՏԷՐ - ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է գիշերօթիկ և երթեւեկ աշակերտներ. պատրաստում է զինապալայի, բէալական ուսումնարանի, կազէտների կորպուսի և այլ ուսումնարանների համար: Գիշերօթիկները կապրեն և կուսանեն Բորժոմ ա-մարանոցում, իսկ երթեւեկները Թիֆլիսում: Ցանկացողները կարող են որդոց տալ՝ Բորժոմ ա-մարանոց տանելու համար: Հասցէն. ТИФЛИСЪ. Солоаки. Гановская ул., № 11, կամ БОР-ЖОМЪ, дача Романова, Пансионъ Теръ-Авсолова. (№ 65) 1—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COMP.

ՖԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթեւեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱՌՈՒՄ, չորեքաւթ թի օրերը, երկու չաբաթը մի անգամ, չորեքաւթ թի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈՒՍԿԱՐՁ

Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: ԲԱՌՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱԽԵՐԸ ԴՈՒՍԵՆ ԳԱԼԻՍ: Չորեքաւթ թի, յունիսի 14—26-ին, ՄԻՆԳՐԷԼԻՒՍ չորեքուս, կապիտան ԺԻՐՈՒՆԷՆ, և այլն, երկու չաբաթը մի անգամ, ՉՈՐԵՔԱՅԻՐ օրերը, 4 ժա-մին կէսօրից յետոյ:

Ցանկաների գները ուղղակի երթեւեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գներից պա-կասեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ըն-կերութեան ագէնտներին, ԲԱՌՈՒՄՈՒՄ պ. ՎԻԿտոր ԴՄԵՆՈՒՆ, Նաբէլէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ Գ. Օ. Գ. Պարէնդէստանու, Սիւնի փող. Նախկին Արժրոնու քարվանսարա, ԲԱԳՈՒՄ պ. Սամսոն Դիլդա-րովին, Կոլիւքեակիակայա հրապարակ, Նոյօրօսիսկում պ. Լուի Ռէնո:

(Կ. չ.)

(№ 64) 2—5